

Դանիէլ 1800 Սեպտեմբերի 28ին Տեղեղոսի արգելանքից աղառուելով՝ Պօլիս յըմննելու համար Յովհաննէս պատրիարքից Եւդոկիայի առաջնորդ էր նշանակուած և 1801 Յունվարի 23ից արդէն Եւդոկիայում առանց պաշտօնք ստանձնելու սպասումէր Յովսէփի Էջմիածին ժամանելուն՝ որ ինքն ևս գալով՝ խոր նուիրակութեան հաշխւը ներկայացնէր, իսկ Գալուստ Նոյեմբերի 4ին ազատուած Լիմնոսի արգելանքից՝ շարունակումէր Նիկոմիզիայի նուիրակութիւնը։

Յովսէփի ձեռնասուն աշակերտ Գրիգոր վարդապետ Ագրիքանցի նկատելով որ, եթէ Դանիէլ կաթուղիկոս գառնայ, ինքն եպիսկոպոս և Ռուսաստանի առաջնորդ չի նշանակուիլ, լուր տարածեց թէ Յովսէփ վախճանելիս՝ կտակել է կամ Կ. Պօլսոյ պատրիարք Յովհաննէս Զամաշընեանին, և կտմ Դաւիթ Կնէգէթեցուն կոթուղիկոսացնել։ այս մասին գրեց նաև Կ. Պօլսոյ Ռուսական գեսպան Թամարովին, նորա թարգման Գրիգոր Ազայեկեանին և Յովհաննէս պատրիարքին։ Հաստատ գիտենալով որ, եթէ Հրաւիրալիները Էջմիածին հասնեն՝ անպատճառ Դանիէլին պիտի ընտրեն կաթուղիկու, զրդեց Վրաց ալքայորդի Դաւթին ու այլ պաշտօնէից ի գիտահոգ պահել նոցա։ ուսկայն Հրաւիրակները իրանց գրութիւնը յայսնելով Էջմիածնի միաբանութեան՝ Այանձնարարեցին Դանիէլին միայն ընտրել կաթուղիկոս։

(Նարանակէլլ)

8. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԲԱՐԵՔՆԵՐ *

Որովհետեւ գաստիարակութեան նպատակը բարոյական է, ուստի բարոյագիտութեան գիտնօրէն ուսումնասիրութիւնը ուսուցչի համար մի առանձին նշանակութիւն ունի։ Եթէ ուսուցչի պարոնը բարոյական գաղափարներ ունի, այն ժամանակ նա ոչ թէ միմիայն կրօնի դասատուութեան մէջ

(*) Ապն վերնագրով մի յօդուած գրած է Զուկեցերիայի ուսումնաբանների վեցատեսուչ Վես-Բուրդգորֆ մանկավարժ Գոկ. Գիտթեսի Հրաւիրակած ամսագրութ. Հեղինակը էւր յօդուածուամ հետեւումէ մեծաւ մասամբ կիրշմանի բարոյագիտութեան։ որից մենք քաղուածօրէն առնելով ուղարկումենք Զերդ խմբագրութեան։

այդ գաղափարները աշակերտներին պիտի աւանդի այլև ընթերցանութեան և պատմութեան դասատրութեան մէջ,

Քարոյագիտութեան մի առանձին գլուխ խօսումէ բարյական բարիքների, կամ բարեաց վարդապետութեան մասին։ Ամենից առաջ այստեղ մի հարց է ծագում թէ ի՞նչ է բարյական բարիքն։

Հարստութիւն, կարողութիւն, փառք և դրանց նմաններն ինքն ըստ ինքեան բարոյական բարիք չեն, որովհետեւ դոքա կարող են մարդուն նաև գեպի չարն տանել, օրինակ, դէպի զուարձասիրութիւն, իշխանասիրութիւն ևլն, բացի սրանից գուցեւ դոքա բարոյական ճանապարհով ձեռք չեն բերուած, ինչպէս որ այս շատ անգամ կեանքի մէջ պատահումէ:

Միայն այնպիսի բարին, որ բարոյական վարքով է ձեռք բերվում և, թե անհատի և թե մարդկութեան բարոյականութեան յառաջացման նպաստութե կոչվումը բարոյական բարի:

Այդպիսի բարիքներ են ընտանիքը, սովորութիւնը, կրօնը, արուեստը, գիտութիւնը, լեզու և լն. Սոցանից իւրաքանչիւրը այստեղ մի առանձին քըն-նութեան է ենթակուած.

1. ԱՄԵՆԱԲԵՐՅՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՌԵՄՆ Ամենաբարձր բարւոյ մասին մեծ եռանգով էին հարցում. Եպիկուրեանները այդ գտնումէին զգայական աշխարհում. Ստոյիկեանները ընդհակառակն բացատրումէին. թէ գաղափարականն է միայն ամենաբարձր բարին:

Ψιεύθωτορων Ψηλαστήν και **Ιερήσιτοπελέκυν** αγίους αιτούμενούς γανωδων λέπρων μανιατορή (φαλακρή παρακαλησι) και ορθογενείς μεριμνής διάβολος.

Ս. Օգոստինոս ցոյց էր տալիս որպէս ամենաբարձր բարին - Աստուծուն, և Քրիստոս ասումէր « վնասուեցէք Աստուծու արքայութիւնն և նորա արդարութիւնն, այն ժամանակ միւս բոլոր բաները կը տրուին ձեզ » . Ըստ այսմ քրիստոնէի համար ամենաբարձր բարին կը լինէր Աստուծու արքայութիւնը, այսինքն իրերի աստուածային կարգաւորութիւն, որն Քրիստոսի հոգւով այս երկրի վերայ պիտի վերականգնուի : Ռւստի մենք վարդապետական ձևով հետեւեալ կերպով կարող ենք ասել . ամենաբարձր բարին է Աստուծու ծառայութեան սրբագործուած և երջանկացած մարդկութիւնը : Բայց մարդկութիւնը կազմվումէ զանազան անհատներից . ուստի և ամենաբարձր բարին անհատի համար կազմումէ երջանկութիւն : Խսկ սա պարունակումէ միմիպյն բարոյական կատարելութեան մէջ .

Հար մարդը երբէք չէ կարող իրան երջանիկ զգալ, նա միշտ իւր մէջ նա-
խատինք է կրում։ Սակայն հոգին ու սիրտը ճշմարտի, գեղեցկի և սրբի
գաղափարական շրջաններին դարձնելն է, որ մարդուն ի ներքուստ երջան-
կացնում։ Աւստի Շիլլերն իրաւամբ ասումէ, «Նոյն իսկ մարդու կամքը նո-
րա երկնաւոր արքայութիւնն է»։

Եւ Արյանից եւ Կողման Հետեւեալն.

Աշրամի նրանց որոնք մաքուր սիրտ ունին, մաքուր սիրտ ով Հայր, սա մի բարիք է, որ ամփոփումէ իւր մէջ մի թանկադին զանձ գա մի ամրութիւն է ոյն կեանքի փշոտ ճանապարհների վերայ գա մի ապահովագոյն գահ է ամեն աղնի, և գեղեցիկ բաներ տիրապետելուն, և մի սրտի անդոր բուժեան համար, Դա մի առհասուչեայ է ամեն բարի գործերի համար, դո մո վախճան է ամեն տեսակ զգայթեան զուարձասիրութեան դէմ, ան մի մաքուր սիրտ թթվում ունենալին, նշանակումէ աստուածութեան բնակարան լինել:

Միայն կատարեալ մարդը կարող է երջանիկ լինել, Քարի մարդը երջանիկ է և այդ երջանկութեան մէջ կատարելութեան միջնորդ իմանումնիք ամենալարին բարիքը, որի հետ միանումն միւս բոլոր բարիքները, Քայց անհատի կատարելութիւնն պայմանաւորուած է ամրողի կատարելութեամին, և հէնց այս է առհասարակ աշխարհի անուբանին նպաստին, ուստի մեղանից ամեն մինի կոչումն է նրան թէ իւր և թէ մեր մէջ իրագործի, իրաքանչիւրը իւր տեղում պիտի աշխատի մարդկութեան բարոյականացման նըսպաստել:

Համամատութեան համար մենք այստեղ յառաջ կրերենք մի քանի ասացուածներ փիլիսոփաներից:

Հոդցեն (Mikrokosmos փոքր աիեղերը Ա, 302) ասումէ Հաճութիւնը պինդ պահպանելու, և ցախց խռոսափելու ձգտումն միակ դրդիչ պատճառն է բոլոր գործաւնեութեան համար:

Պիհցեր (իրաւունք, պետութիւն և եկեղեցի, Ա, 21) շշշտումէ թէ ամենամնաքուր բարեպաշտութիւնը և առաքինութիւնը, անձնուեր սէր և մի տեսակ ձգտումն է դէպի ամենապարզ ամենակատարեալ երջանկութիւնը, և իւր սեփական ապերջանկութիւն միատեղ բնութեան ընդդէմ է:

Դորբան հակառակ պիտի նկատել, որ այդ շատ վտանգաւոր կլինի, եթէ մարդ իւր սեփական երջանկութիւնն որպէս ամենած բարին համարէ, վասն զի առանց դրա ել մարդիկների մէջ եստկանութիւնը բաւական զօրից է:

Հէնց կրն համար է որ Աման ամեն մի եւգամնականութեան դէմ լինելով ասումէ, «այդ հակասումէ նոյն իսկ բարոյականութեան սկզբունքին, եթէ մարդուն իւր սեփական երջանկութիւնն իրեն շարժառիթ լինի այս երջանկութեան սկզբունքը մը տեսակ մահ է ամեն բարոյականութեան համար»:

Միւս կողմէց Կանտը երջանկութիւնը դնումէ բարոյականութեան որպէս մի հետեւանք: Եղատութեան գիտակցութիւնը պարտիթ հետեւուն մէջ տալիս է մեր ինքնարաւականութիւն որին մանք պիտի հետեւունք:

Անուբանութիւնը բարիք անուբանութիւնն է, հետևարար սրանից մի անհրաժեշտ հետեւանք կլինի երջանկութիւնն:

Հոգաքինութիւնը և երջանկութիւնը իմիսան կազմումն մի հնարաւոր աշխարհի ամենաբարձր բարիք:

Սանք Պլատոնի ասած ով կամփոփենք:

Ա Մածել ինչ որ ծշաբեկ է, զգալ ինչ որ ֆելքը է, և կամնալ ինչ
որ բարձր է հոգին հենց դրա մէջ է ճանաչում բանակոն իւղանի նորդուուիլ:

2. ԸՆՏԱՆԻՔ.

Ընտանիք այսինքն ամուսնութիւնից յառաջ եկած տնային ընկերութիւ-
նը՝ կաղմու մէ ամեն բարոյականութիւնն և քաղաքակրթութեան գլխաւոր
նեցուկը: Ամուսինները կազմումն բարոյական սիրոյ և կեանքի միաբանու-
թիւն: Ծնողներն են իւրեանց ընտանիքի ծնուած իշխանները: քահանա-
ները և օրէնստոնները: տնային առաքինութիւններից յառաջ անու մին ամեն
տեսակ քաղաքական առաքինութիւնները: Ցունը որոշումէ ապագայ սերըն-
դի թէ մարմնաւոր և թէ հոգեկան զարդացումն: այստեղ է որ մանուկի
բնաւորութիւնն իւնք մտնելուց առաջ կազմակերպվում է, նորա դաստիա-
րակութիւն սկսվումէ նորա առաջին շնչառութեան հետ և մեծաւ մասամբ
յաջողուած կամ պակասաւոր է լինում: յառաջ քան մանուկը ինքնագի-
տակցութեան կը գոյի:

Մատաղ համակռւմ՝ որ ամեն տեսակ տպաւորութիւններ ընդունելուն
ընդունակ է, սովորումէ մնրդ մեծաւ մասամբ: և նորա կամքը խառնուածքը
և հոգին ստանումէ ապագայի համար բնաւորութիւն: նա սովորութեամբ
օրինահոգ և տան մարող հոգւով անլի շատ է սովորում: քան թէ ու-
սուեմնարանի եկեղեցու և հասարակական կեանքի*) միջոցով Հենց օրա
համար է, որ ծնողների վերայ աչագին պատասխանատւութիւն կայ իւրեանց
զաւակների դաստիարակութեան վերաբերմնամբ:

Ծնողներ պարտաւոր են իրանց զաւակներին ընդունակ լեարձնել այն բա-
նի, որ նորա որպէս ժառանգներ կարողանան տիրել մինչեւ ցայտմեղած կուլ-
տուրայի գանձին և իւրեանց սեփական աշխատութեամբ այդ գանձը շատա-
ցնեն: Այսպէս ուրիմն գաստիարակութիւնն կամտարեալ մոքով շարունակու-
մէ մարդկութեան պատմութիւնը: Գլխաւոր խնդիրը գաստիարակութեան
մէջ բնականապէս ընկնումէ մօրը: որովհեաւ մինչդեռ հայրն աշխա-
տումէ առանձնապէս ճանաչողութեան և հնագանդութեան քերելու: մայրն
պատ պիջոցին խնամ: մէ զգացմունքներն, որոնց վերաց հիմնուած են բնաւո-
րութիւնը կրօնը և գեղարժւեստը: Մայրն ամենից առաջ ստեղծումէ տան
բնարոյական օդը: որն ներքին մարդէւ մնունք է կազմում:

Այս թէ կանայք ոչ մի գործիք հնարած չեն: ոչ մի գիւտ և յայտ-
նագիրծութիւն չեն արած լայց նրանց միջոցով մեծ և առաքինի մարդիկ
և կանայք դաստիարակուած են **): և այս բաւական շատ է: Եատ նշանա-
ւոր մարդիկ պարծենումէին իրենց մայրերի իրանց բնաւորութեան վերայ ա-
րած օրհնալիր աղքեցութեամբ բաւական է որ մենք այնուղ յիշենք Ա:
Օգոստինոսին, Կրոմնվելին, Աեսլէին, Գեծմէին, Շիլէրին և Աշինգտո-

(*) Ethik. 168. v. Kirchner.

(**) Smiles, Charakter.

նին. — ուստի կողմէ կրթելն նշանակումէ քաղաքակրթութիւնը բարձրացնել, և գաստիարակութեան ամեն լաւ եղանակն այն կլինէր, ինչպէս որ նապոլէօն Ա. ևս ճանաշած էր, որ կարողանար այնպիսի մայրեր պատրաստել, որ նորա իրենց զաւակներու կրթելն հասկանային:

Մանուկները իրանց կողմից ևս պարտաւոր են պատկառանք ունենալ դեպի ծնողները, նա և այն ժամանակ երբ նոքա հասակ են առած և ինքնուրոյն դրութիւն են ստացած:

Մանուկը իւր քոյրերի և եղբայրների մէջ է գտնում իւր բնական խաղակից և ուսումնակից ընկերները, նրանց հասակի, ցեղի և բնաւորութեան զանազանութիւնները հարստացնում են ընտանեկան կեանքը. Այս մարմնաւոր բնական յարաբերութիւնից պէտք է փոքր առ փոքր բարեկանութեան հոգեոր - բարոյական յարաբերութիւնը զարգանայ:

Յ. ԿՐՕՆ.

Առանց կրօնի չըկայ ոչ մի ազգ. կուզէ դա կուռքին, գաղափարական մարդուն կամ Աստուծուն որպէս հոգուն երկրպագելու լինի. դրա մէջ անշիշանելի մնացած է սիրոյ հաղորդակցութեան զգացմունքը աստուածայինի հետ, և միևնույն Աստուծուն հազար անուան տակ էին երկրպագում:

Անուանիր ինչ որ կամննումնս, թէ բաղդ, թէ սիրտ, թէ սէր, թէ Աստուած. — ես գրա համար ոչինչ այլ անուն չունիմ, դա միայն զգացմունք է, ԳԷօթէ.

Այս օրուան օրս կրօնը նոյն է. ինչ որ ժողովրդական փիլիսոփայութիւնը և ժողովրդի բարոյականութիւնը. նա պարունակումէ իր մէջ այն, ինչ որ ժողովուրդը գաղափարական աշխարհայեցողութիւնից ունի.

Ի՞նչ է կեանքն առանց կրօնի:

Մի կեղեւ առանց միջուկի գարունք առանց ծաղկի.

Առանց բարձր աշխարհայեցողութեան, որն միմիայն Աստուածածանութիւն է տալիս, չէ կարող մարդ իրեն բաղդաւոր զգալ նա կըզրկուի ամենամաքուր և արժանաւոր ուրախութիւնից և իւր երկրային վայելմունքից:

Բացի սորանից, մարդ կրօնի սուրբ գաղափարով տոգորուած, դիւրագոյն կարողանումէ տանել իւր գոյութեան տանջանքներն և ուրախութեամբ, որ նորան ճանապարհին ծաղկած հանդիպումէ. նա անպատոր մտքով ապրում և ուրախանումէ ծշմսրտի, գեղեցկի, սրբի և յափառենականութեան աշխարհում, որին մարդ հոգեպէս պատկանումէ. (Տիշեր):

Ըեգել կրօն էր համարում այն՝ եթէ նարդ ըստ Աստուծոյ մոտածում և ապրումէ. եթէ լի է հոգւով և ամէն բան անումէ ոչ թէ պարտքից դրդուած, այլ սիրուց, նա անումէ այդ, որովհետեւ կամենումէ, և նրա համար է կամենում. որովհետեւ Աստուած այդ ասումէ, այսինքն Աստուած մեր մէջ.

Եթէ ոք մեր ժամանակում շատերն ողղափառութեան ընդգեմ լինելով

հական եկեղեցական և անկրօն են ուղում լինել. նոքա իրանց կարճատեսութեամբ կընկնեն ծայրաշեղութեան մէջ նոքա մոռանումեն, որ այդ հպաւն է վերաբերում և ոչ թէ գրեթին, ճշմարտութեան և ոչ թէ ձեւականութեան, կրօնին և ոչ թէ մի որ և է դաւանութեան.

Հելլագայում իսկ այդպէս էր, ժողովուրդը դաւանումէր բազմատուածութիւն. իսկ քահանաները իրանք ուսուցանումէին զանազան միստերիաներ (կրօնական գաղտնիք) և փիլիսոփանները որոնում և գտնումէին մի և նոյն ճշմարտութիւնը. ինչպէս մնկք Ուստի հարկ չէ որ մինը այն եկեղեցուց հրաժարուի, որի մէջ որ նա ծնուած է. ընդհակառակն եթէ մենք խորհենք, թէ որ բան մնկք ամենքս քրիստոնէութեան պարտական ենք, թէ ինչպէս մեր ամբողջ մոտածմունքն ու զգացմունքը դորա հետ սերտ կապուած է, և թէ ինչ տեսակ վտանգի մէջ ժողովրդի բարոյականութիւնը կը գտնուի, եթէ որ եկեղեցին ընկնի և վերջապէս չնայելով Ս. Գրքի և եկեղեցական մատենագրութեան, որքան բարի գրդումներ մի հոգելից քարոզիչ մեզ տալիս է. այսպէս մնկք պարտական ենք, որպէս մեր բարոյական պարտք. եկեղեցոյ շինութեան գործակից լինել.

4. ԳԻՏՈՒԹԻՒՆ.

Քրիստոսից 6 դար առաջ սկսուեց արեելքում փիլիսոփայական և գիտական ձանաշողութեան աշխարհայեցողութեան ձգտումն զարգանալ. Յօւնաց ազդը ամենից առաջ մնամեծ խնդիրներ առաջ դրեց.—ո՞րտեղից ի՞նչ և ի՞նչ բանի համար ենք, ի՞նչ կարող ենք իմանալ. ի՞նչ պիտի անենք մնեք, ի՞նչ բանի պիտի հաւատանք. Այդ ժամանակից մարդս չէ դադարած այդպիսի բաներ հետազօտելուց, և այն մարդիկ, որոնց կոչումն այդ խընդիրն լուծելն է, կոչվումն փիլիսոփաններ—իմաստասէրներ. Փիլիսոփայութիւնից յառաջ են գալիս միւս բոլոր գիտութիւնները և ամենայն հետախուզողն, որ ձանաշողութեան սահմանն ընդարձակած է, աւելի է նըպաստում մարդկութեան. քան թէ մի աշխարհակալ որի խարազանի տակ ազգերը հեծում և հառաջումնն.

Դիտութիւն տարածելու նպատակով հիմնուած են առաջարաններ. Ժողովրդական ուսումնարանը տալիս է տարրական կրթութիւն այնչափ, որչափ որ մի քաղաքացու համար կարեոր է. ուստի մի կուլտուրական պետութիւն ամենայն իրաւամբ պարտաւորուած է ուսումն պարտաւորեցուցիչ անելու. Ժողովրդի (կրօնը մեծ նշանակութիւն ունենալու պատճառով) ուսումնարան չը պիտի առանց կրօնի լինի. նա պարտաւոր է իւր սանիկը ոչ թէ միմիայն գործնական կեանքի համար նախապատրաստել. այլ պետութեան, եկեղեցւոյ և հասարակութեան գործունեայ և օգտակար անդամ՝ գուրս բերել. նա պարտաւոր է ոչ թէ միմիայն քաղաքացիներ, այլ և բարի ճարտիք կրթել. Ուսումնարանն երեք չը պիտի մոռանայ, որ նա տան լրացուցիչն է, ուստի նա պարտաւոր է ամենից առաջ բարոյական առաքինութիւնները խրնամել. Կը նուի ամփոփումէ ոչ թէ միայն հանաշողութիւններ պիտի և

ընդունակութիւններ, այսինքն գրանց ինքնուրոյն ընդարձակել, ոչ թէ միմիայն միտք այլ և նոյնպէս ուրու և կու:

Գիտութեան միակողմանի շեշտելն կը վնասէ մի ազգի, հարկաւոր է միշտ բազմակողմանի զարգացումն և ոգեսորութիւն բարոյական բարիքների պատրաստեան, գրականութեան, գեղարուեստի, և կրօնի համար:

* Մեծ մտքերը և մաքուր սկրտը, այս է որ որ մանք մեզ համար (նաև երիտասարդութեան համար) Աստուծուց պիտի խնդրենք » : (Գէօթէ)

Եթէ մննք բնաւորութիւնը և սիրտը, այնպէս կրթենք երիտասարդութեան մէջ, ինչպէս որ միտքը, այն ժամանակ մննք չենք գանգատիլ այժմեան երիտասարդութեան անհաջանդութեան, յանդգնութեան, նիմթապաշտութեան, չափազանց զռւարժասիրութեան և կոպտութեան վերայ:

5. ԳԵՂԱՐԱՒԵՍՏ *

Թէ ինչպէս, ըստ Հին զրոյցին, Օրիէոս իւր քնարի գրաւիչ ձայնով անտառի կենդանիները կաշկանդումէր, կը զոմիթրոսը իւր երգերով ամբողջ Յունաստանին միմիթարումէր, Տիրտէուս իւր դիւցազնական երգերով Յպարտայի մարդկերանց դէպի յաղթական պատերազմը ոգեսորումէր, և թէ ինչպէս Պիմթագորաս իւր լեզուով իշխաններին և ազգերին երջանկութեան ճանապարհ բացարեց, այս ամենը պարզ ցոյց են տալիս որ գիտութիւնները և գեղարուեստները ամեն ժամանակ ունին իւրեանց սուրբ առաքելութիւնը երկնային գոյութիւնը բացատրել, և ամեն մինի սիրտը լեցնել, եթէ որ այդ սիրտը քարից չե:

Բարեգործիչ են ասում Դալբերտգ գեղարուեստների գործերը, որովհետեւ նորա անմեղ կերպով մեզ զուարձացնումն: Շատ անհիմն է այն կարծիքը, իբր թէ գեղարուեստները հոգուն քնացնումն: Մեծն Աղեքսանդր, Կիսար Մեծն Ֆրիգիերիկոս գեղարուեստների ջերմ բարեկամ էին, լուսաւորուած յօները և հռովմայեցիները կոպիտ բարբարոսների գերայ յաղթաւթիւն էին տանում: Բացի սրանից կան նաև գեղարուեստները, որոնք հռչակաւոր մարդկերանց յիշատակներն արձանների միջոցով յաւերժացնումն: Հոգուն դէպի ամենաբարձր աստուածպաշտութիւն է բարձրացնում: Գեղարուեստները միացնումն գլուխը և սիրտը, կոպումն գեղեցիկը սուրբի հետ և յառաջ են բերում սէր դէպ յառաքինութիւն:

Գէօթէն իւր բանաստեղծութեան մէջ մի տեղ գանգատումէ:

* Ով որ բանաստեղծութեան ձայն չէ հասկանում, նա բարբարոս է: ով կուզի դա լինի » :

Այս պատճառով ոչ ոք իրեն միակողմանի չը պիտի կրթի, ինչպէս որ այսօր շատերն անումեն: Բաւական չէ, որ մինը մի ամբողջ իրաւաբան բժիշկ, զինուորական կամ վաճառական լինի, և թէ միմիայն իւր առարկայով սահ-

(*) Դոկտ. Վոլֆարտ « Երջանկութեան վարդապետութիւն » :

մանափակուի և ամեն վահմ բաների համար իւր հասկաց պլոթինը կորցնէ, Ինչպէս մեծն Գիրիդերիկոս իւր սրբի (Glöte)՝ Լուտերը՝ Պաշնամուրի. Պափթը իւր քնարի վերայ ածումէր, այնպէս ևս իւրաքանչիւր լուսաւորուած անձն գոնէ առ նուազն պիտի աշխատէ մի արուեստ հետպահութիւնը մշակել. Աչ սակաւ կարեւոր էր, որ ամեն մի լուսաւորուած ընտանիքում հին և նոր կլասիքներից կազմուած փոքրիկ գրադարան գոյութիւն ունենար. Ինչպէս որ լաւ երգիրը յաճախակի չէ կարելի երգել, այնպէս ևս այդպիսի գրուածների ընթեռնուուլն, գրանց մէջ ևս չափ և սահման պիտի պահպանել ինչպէս նաև ամեն բանի մէջ, « նուագարանը նկատումէ Հերդեր նա և առանց բառերի միայն ձայնով ունի մի տեսակ վսեմութիւն, որը ոչ մի կեղարուեստ չունի, նա կարծես թէ հանձարի լեզուն լինի, որ անմիջապէս մեր սրտի խորքերի հետ խօսակցումէ, Եւ Կարօլինէ Փոն Վոլցոգին ասումէ, « նուագարանը մի բարձր և նուրբ լեզուէ քան թէ բառերով արտայայտած լեզուն և սկսվումէ այնտեղ ուր վերջինս դադարումէ » .

6. Լեզու.

Լեզուն է մոքերի արտայպլութը. նա իւր հասկացողական բովանդակութեամբ նուագարանից բարձր է, որովհեակ նա մեր զգացմունքները, մաքերը և ցանկութիւնները—մէկ խօսքով մեր ամբողջ հոգեկան կիանքը արտայայտումէ. մարդու ընդունակութիւնը չափումն նորա խօսելուց. « Շատ և լաւ խօսիլն մի սրամիտ գլխի տաղանդն է, քիչ և լաւը՝ մտածողի բնաւորութիւնն, շատը և վատը՝ ցնորամոի կատաղութիւնն քիչը և վատը՝ Եիմարի թշուառութիւնն » : (Հռ. Փելանդ.)

Լեզուի մեր վերայ դրած առաջին բարոյական պարտըն է հշտաբառական, Լեզուն նորա համար չէ, որ մենք մեր մոքերն ածինք, և եթէ մեծամասնութիւնը այդ սկզբունքին հետեւի, այն ժամանակ հասարակութիւնը կը քայքայուի: Եթէ դու միշտ չես համարձակիլ մտածածք ասել, գոնէ մտածիր միշտ երբ գու խօսելիս կլինիս:

Խօսքերը մոքերի համար այն են, ինչ որ ոսկին աղամանդի համար, այս ինքն ընդելուզող, խօսքերը ոչ թէ միայն մոքեր են, այլ և գործեր:

Ոչ միայն զօրավարի խօսքը, որն պատերազմի հրաման է տալիս, մի գործ է այլէ մտածողի, մարդարէի, բանաստեղծի խօսքը: « Ճշմարիտ խօսքերը կենդանի էակներ են », (Բայրոն). նոքա արտասանուելուց զինի բաւական երկար են ներգործում, հենց սորա համար է որ մենք ամենայն մի խօսքի համար պարտաւորենք հաշիւ տալ: Լեզուն շատ սուր է, նա այնպէս խոր վերքեր է յառաջացնում ինչպէս մի երկայրի սուր: Խօսքերով աղօմում և բարձր երգումենք որով մարդկային կուրծքը դողումէ. սակայն խօսքերով կարելի է նա և մարձաւորներին վշտացնել, անմեղներին դայթակլեցնել և ամեն գաղափարներ ծաղր ու ծանակ առնել: Մի թոյլ տուէք ձեր բերաներին բարուրախօսութիւն անելու:

Գրերի գիւտի միջոցով յառաջ եկաւ գրականութիւն, այսինքն լեզուով և գրերով արտայայտուած հոգեկան գանձի հասկացողութիւնը (In begriff.)

Գրականութիւնը նեղ մտքով ամփոփումէ մի աղջի գրաւոր արուեստական գործերը որպարհ նորա բարձրը և սովորութիւնը արուեստական կերպով ներկայացնում են։ Գրականութեան նպատակն է մարդկութեան ազնուացումն մտքի լուսաւորութեան գգացմունքի վսեմութեան և կամքի պարզութեան միջոցով։ Խնչպէս որ յոյները Համերի միջօցով դէպի բարյականութիւն կրթուեցան այնպէս ևս այսօր մի աղջի համար իւր աղջային դրականութիւնը նորա կրթութեան գլխաւոր աղյուրն է։ Գերմանական աղջի առարինութիւններն արտացղումնեն գերմանական գրականութեան մէջ։ Համար կամ գիրք շարադրողը պէտք է մտաբերի այն ինչ որ Ծիլլեր արուեստաւորի մասին ասումէ։ «Մարդիկների արժանիքը ձեր ձեռին է, պահպանեցէք նրան»։ գիրք շարադրողն պիտի ժողովրդի ուսուցիչ և բարեկամ լինի, նա աստուածութեան քահանայ պիտի լինի։ Սորա հակառակն ընթերցողը պիտի նմանի մեղուին, մրայն մողը և ոչ թէ թշնի պիտի ժողովէ գրքերից, նա ամեն ինչ պիտի քննի և լաւն պարուաոր է պահելու։ Կոյնպէս գրքերի մասին կարելի է մի և նոյն խօսքը ասել։ «Վատ հասարակութիւնը ապականումէ բարի սովորութիւնները»։

Մարդու կարգացած գրքերից կարելի է իմանալ նորա բնաւորութիւնը, որով հետեւան շրջապատող հասարակութիւնն է։ Աւստի ծնողները և ուսուցիչները պիտի հակեն իրենց սանիկի ընթերցանութեան վերայ։ Առանձին հոգատարութեան կարօտ է զրուցատրական ընթերցանութեան ընտրութիւն։ Նաև չափից գորս ընթերցանութիւնից պէտք է մարդ զգուշանայ որովհետեւ զահուն ջլատումէ, երեակայութիւնը արբեցնում և կամքը թուլացնում։

7. ԲԱՐՈՑԵԿԱՆ ԱՆՉԱԸՆԻՈՒԹԻՒՆ.

Հակառակ այսօրուայ ինտելեկտուալիսմուայի (մի միայն մտքերի և հակացղութիւնների վերայ հիմնուած փիլիսոփայութիւնն որն հաստատումէ, թէ միմբայն մտքը կարող է ճշմարտութիւն ճանաչել և արտաքին աշխարհը ընդունումէ որպէս մի երևողի (charakter) մոնք ամենից առաջ պիտի շիշտենք բարոյական հասաւութեան (charakter)։ գա ամեն մի անհատի համար ամենաբարին բարին է։ «Բնաւորութեան տէր մարդիկ, ասումէ է միրզօն, մարդկութեան խղճանակն են կազմում»։

Ի՞նչ կլնպաստեն մող բղոր բարեկաները, ի՞նչ օգուտ կըտայ մող հարստութիւնը և կարողութիւնը, ի՞նչ կօժանդակէ մող արուեստը զիտութիւնը և կրօնը եթէ որ դոքտ բարյականութեան չեն ծառայելու։ Բնաւո-

բութիւնը աւելի նշանակութիւն ունի աշխարհի մէջ քան թէ մի որ և է սեփականութիւն. նա՝ ներքին արժէքի, մարդկային արժանաւորութեան ամենաբարձր բարին է, Քնաւորութիւնը ամեն մինի ինքնուղղին գործն է, որովհետեւ այդ ամեն մինից կախումն ունի, թէ նա ինչպիսի բնաւորութիւն ստանալու է, Քոլոր մեր զգացմունքներն, մողերն, խօսքերն ու գործերն ազդումն նորա վերայ, ուրիշն մեր ինքնակրթութեան ասպարեզը շատ մեծ է, բնաւորութիւնը մեր ամբողջ կեանքի հետեանքն է, դորա համար է որ Գեօթէն առումէ, Վարդու պատմութիւնն նոյն խկ նորա լնաւորութիւնն է :

Հարստաց, հզօր, գիտնական չէ կարող ամեն ոք լինել, բայց ազնիւ և
առ ոքինի լինելն ամեն ոք կարող է, եթէ մարդ հանձնարի վերայ է զարգա-
նում, այնուամենայնիւ ամեն մինը ցոյց է տպիս պատկառամք՝ բնաւորու-
թեան։ Բնաւորութիւնն է, ասումէ Սմայլս», մի սեփականութիւն, նա
ամեն ունեցածներից ամենազնիւն է։ Նա ստեղծումէ ընդհանուր բարե-
ցակամութիւն և պատկառամք առ մարդիկ։ Մարդկութեան ամենազնիւ-
ներկայացուցիչների մեջ տրուած մեծ օրինակների լուսով առաջնորդուած,
իւրաքանչիւրը մեկանից պիտի ձգտի բնաւորութեան աստիճանին հանելու,
ոչ թէ նիւթական միջոցներով ամենահարուստ պիտի լինել այլ հօգւով, ոչ
թէ աշխարհային դրութեամբ ամենամեծ լինել, այլ ճշմարիտ ազնուածութեամբ,
ոչ թէ ամենախիւզք, այլ առաքինի, ոչ թէ ամենազօրեղ և ազդեցութիւն
ունեցող, այլ ճշմարիտ, և ուղիղ և ազնիւ։

Ամեն մի ազգ՝ ստանումէ իւր հոգեկան նշաններ մեծ մարդիկներից, Մեծ
մարդիկ ոչ թէ միմիայն մի ազգի զաւակներ են, այլ և հայրեր, Կըրպան-
չիր Քիրմանացի կրօւմէ անգիտակցաբար Լուսերի, Կանոնի և Ծիլերի
կոիքը, ամեն մի Խոալացի՝ Քանտէինը, ամեն մի Անդղխացի՝ Ծեկսպիրինը
են. և որքան երկար մի ազգ իւր ճշմարիտ մեծ մարդկերանց սիրով և պատ-
կառանքով է նայում, նա երբէք կորստեան անդունգին չիմտնուիլ. Նոյն
ինքն երբ օտարի լծի տակ է հեծում, բարձրանումեն այդ ժամանակ դի-
ցազունների օտուերները և փշում շղթաներ.

Քայլ եթէ ազգի ծրագները արհամարհութին և մուացութին կթէ մի ժողովորդ այլ ևս չէ աշխատում խը բնաօրութիւնը ազնուացնելու և եթէ հարստութիւնը զուարձութիւնը և սնափառութիւնը գերակշռեն գաղափարական շահերին (Interessen). այն ժամանակ ամենալաւ կարգադրութիւնն անգամ կարող չէ ազգային աւերակ գրութիւնը բարոյապես վերականգնել և հետզիտէ ազնուացնել :

1886 Յունի. 17 թ. Ապրիլի Տէր Գալլիկէնց անց.

Համար սուսիդ՝ բայց պատճենահան գործն թշիել
չըսկած է համար սուսիդ՝ բայց քաղաքական ըլլու սուսիրու
թագավոր է համար սուսիդ՝ ըստ առաջնորդ համար սուսիդ